

պարոնայք Անտիոքայ: Ստուգագոյն եւս է, զի 'ի նմին ամի 1215 (պակասէ ամիսն) գրեաց Իննովկենտիոս՝ որպէս առ թագաւորն Երուսաղեմի, նոյնպէս եւ առ Լեւոն, առաքել նաւս զինեալս յօգնութիւն պատրիարքին Երուսաղեմի՝ լեկաթի իւրոյ. եւ թէպէտ միայն խորագիր թղթոյն մնայ, շատ է եւ այն 'ի յայտնել զհաշտութիւն եւ զհաճութիւն գրողին առ որ գրէրն: Արդ եթէ անդստին յամէ 1213 եւ եթէ 'ի 1215, մտեալ եւ տիրացեալ էր կոմսին յԱնտիոք. իսկ 'ի սկիզբն յետագայ տարւոյ. այն է 1216, հուսկ անգամ<sup>199</sup>, «Յամսեանն փետրուարի ԺԴ, Տեառնընդառաջին, էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք, արուեստիւ եւ իմաստութեամբ. քանզի զոր յառաջագոյն մեծաւ պատերազմաւ ոչ կարաց ածել 'ի հաւանութիւն, յետոյ առատատուր պարգեւօք եւ խոստմամբ հաւանեցոյց զմանս յիշխանացն. եւ նոքա բացին նմա զդրունսն 'ի զիշերի. յոր եմուտ բազում զօրութեամբ, եւ էառ զդրունսն եւ զամենայն աշտարակս պարսպին շուրջանակի. եւ ելից զփողոցամէջս քաղաքին զօրօք բազմութեամբ. եւ բնակիչք քաղաքին ոչ զիտէին. եւ յորժամ եղէ առաւօտ տեսին զքաղաքն լցեալ զօրօք, եւ ապշեալ յիմարեցան. եւ ոչ ինչ վնաս եղէ ումեք, եւ ոչ ինչս յափշտակեալ: Այլ պատրիարքն եւ ամենայն մեծամեծքն առին զթագաւորն Լեւոն եւ զՌովբէն, եւ գնացին 'ի տաճար Սրբոյն Պետրոսի. եւ պատրիարզն ձեռնադրեաց զՌովբէն՝ Բրինձ Անտիոքայ. եւ ամենեքեան երդուան նմա՝ որպէս իւրեանց հայրենի տեառն: Եւ որք 'ի կլայն էին՝ կացին աւուրս ինչ. եւ տուեալ զայն եւս՝ եկին յերկրպագութիւն Բրընձին Ռովբինի: Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն՝ ցնձայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումնն»<sup>200</sup>:– Հանդէսն նման է կատարելումն յառաջ քան զամս տասն (1206), զորմէ ինքն իսկ Լեւոն մանրամասն

<sup>199</sup> Պատմիչ մեր արքունի ասէ զայսոսիկ, համաձայն արեւմտեայց:

<sup>200</sup> Նուաճման Անտիոքայ յայսմ ժամանակի՝ վկայէ 'ի նմին ամի մերձաւոր ընդօրինակող Մաշտոց գրոց 'ի Պայաս, «Ի թուականութեանս ՈԿԵ... յամս՝ յորում Տերամբ՝ յաղթող թագաւորն Հայոց Լեւոն՝ էառ զԱնտիոք, զմեծ մայրաքաղաքն Ասորոց»:- Յիշէ եւ Ներսէս Պալենց 'ի ժամանակագրութեանն (կանխելով զժամանակ թագաւորութեան Լեւոնի) եթէ 'ի «ԻԱ ամի թագաւորութեան իւրոյ՝ սոյն Լեւոնս էառ դաւով 'ի զիշերի զոյն Անտիոք մեծն, եւ կացոյց անդ Բրինձ զՌովբէն՝ զթոռն եղբօր իւրոյ»:- Դարձեալ այլ ոմն ընդօրինակող աւետարանի յերկրորդում ամին (ՈԿԶ, 1217) ասէ գրեալ՝ «Ի թագաւորութեան քրիստոսապսակ արքայիս մերոյ Ղեովնի, որ է որդի Ստեփանէի, եղբայր մեծին Ռովբէայ, որ միապետեալ ունի թագաւորական իշխանութեամբ զամսեանայն նահանգս Կիլիկեցոց եւ զմեծն Անտոք. որոյ յիշատակն արինութեամբ եղիցի, եւ անուն նորա ազգաց յազգս»: